



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LG n

167

1999

43972-4.1.

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ԱՄԵՆԱՊԱՏԻ ԳԵՐԵԲԶԱՆԻԿ ՀՈՂԵՒՈՐ ՏԵՍՈՆ

ԱՆՏՈՆԻ ՊԵՏՐՈՍԻ Թ

ՊԵՏՐՈՍԻ ԿԵԼԵԿԻՈՅ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ

8781



ԿՈՍՏԱՆՆՆՈՒՊՈԼԻՍ

— 1874 —



28056-02

97

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԾԱՌԱՅ

ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ.

ՊԱՏՐԻԱՐԻՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿՍԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂԱՓՍՈՍԱՅ

ՀԱՍՏԱՏԵՍԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳՍՀԷՆ ՀՌՈՎՄԱՅ

Պատուական Եղբարց Մերոց Արհ. Գեր. Աբբե-
պիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց, Սիրեցեալ Գոր-
ծակցաց մերոց Յ. Քահանայից եւ Աստուա-
ծասէր Որդւոց Հաւատացելոց Պատրիար-
քութեանս Կիլիկիոյ Ուլջոյն եւ
Աստուածային Օրհնութիւնս

516

Անպատմելի է մխիթարութիւնը, զոր կըզգայ վշտացեալ սիրա-
մը՝ երբոր նոյն իսկ վշտերուն պատճառներէն իւր սփոփանքը կը գըտ-
նէ: Այսպէս է մեզի պատահածն ալ, Պատուական Եղբարք եւ Սիրելի
Որդեակք, քանի որ ձեր հանապազօրեայ հաղորդակցութենէ՝ եւ մխի-
թարական ներկայութենէ Աստուծոյ անքննելի խորհրդովը զրկեալ,
Ձեզմէ հեռու՝ արսորանաց մէջն ենք, անդադար կը լսենք եւ կ'ընդու-
նինք ձեզմէ այն սքանչելի լուրերը, որոնք մեր ցաւն ու տրտմութիւ-
նը զրկէ բոլորովին կը փարատեն: Մեր հակառակորդները զմեզ ձեզ-
մէ հեռացունելով՝ կը կարծէին թէ իրենց այլ եւ այլ հնարքներովը կը-
նային զձեզ նուաճել, եւ իրենց բռնութիւններովը զձեզ ընկճել, եւ
այսպէս իրենց անկարգութեանցը զձեզ վատ դերի ընել: Այսպիսի դի-
տաւորութեամբ՝ իրօք ալ ամէն միջոցները ձեզի դէմ ի գործ գրին,
բայց հակառակը տեսան եւ միշտ ամօթով մնացին՝ ձեր անբաժանելի միու-
թեան անյաղթելի հաստատութեան եւ անըրանելի յարատեւութեան փորձն
առնելով, զոր բովանդակ աշխարհիս առջև ցըցուցիք այնչափ արու-
թեամբ ուղղափառութեան ամենարդար դասին պաշտպան կենալով եւ
ամէն անգամ ալ հակառակորդաց յարձակմունքները քաջութեամբ վա-
նելով՝ յաղթութեան փառաւոր պսակներով պսակուեցաք. ինչպէս եւ
կեղեցւոյ առջի դարերէն ի վեր անգութ բռնաւորներուն հարձանաց

29 173

167-60

դէմ՝ անոր ճշմարիտ վարդապետութիւնը պաշտպանող քաջասիրտ և տնեղկիւղ նահատակները փառաւոր յաղթանակներ կանգնեցին և յաւիտենական փառօք պսակուեցան :

Այս՝ մեր հակառակորդներն ալ տեսան որ իրենց ամեն հնարքն ու միջոցները , և որ և իցէ բռնութիւնը ամենեւին իրենց օգուտ մը չ'ընեւէն 'ի դատ՝ իրենց մոլորեալ հետեւողաց թիւը աւելի ևս նուազցուցին . որով և ձեր հաւատքն ու քաջութիւնը միշտ աւելի կը պայծառանայ : Ահաւասիկ արտօրանացս մէջ Մեր անպատեղի մխիթարութեան և քաղցր սփոփանաց բուն պատճառը :

Սակայն ձեր այսչափ անվեհեր դիմադրութենէ և ձեր այսպիսի փառաւոր յաղթանակներէ ետքն ալ՝ հակառակորդներուն դեռ ետ չի քաշուիլը և հալածելէն չի դադրելը՝ զարմանալի բան չէ՝ Պատուական Նղբարք և Սիրելի Որդեակք : Վասն զի եթէ ասկէ յառաջ ժամանակէ մը 'ի վեր ատեն ատեն պատահած դիպուածները քննելու և դիտելու ըլլաք , կը տեսնէք որ . այս հակառակութիւնը , լաւ ևս ըսենք , այս դժբախտ հերձուածը՝ հասարակութեանս մէջ յանկարծ և մէկէն յօրինուած և հաստատուած չէ : Այս դաղափարները իրենց որումը յառաջուց անզղալի կերպով կը ցանկին ժողովրդեան մէջ՝ ապականիչ ախտի մը պէս . որ անզգոյշ անձանց բարեմտութիւնը եղծանելու կը ջանար . և չկը տեսնուէր արդէն , որ այսպէս երկար ժամանակ տարածուելով՝ ապականութիւնը աւելի ևս վտանգաւոր թերևս մահաբեր պիտ'որ ըլլար : Բայց՝ երկնային նախախնամութիւնը սահման մը դրաւ , և սխտը ատենին ինք իրմէ յայտնուեցաւ և անարգուեցաւ :

Սմենուն յայտնի է , որ հասարակութեան մէջէն ոմանք՝ իրենց ունեցած յարգն ու համարումը չարաչար դործածելով՝ բուն աղգասիրութեան ճշմարիտ հողւոյն գաղափարը պէսպէս պատրուակներով ուրիշներուն մտաց մէջ այլայլեցին , և կրօնական անփոփոխելի սկզբունքները ծուռ աղգասիրութեան մը զոհ ընելն իրենց ծանր չեբեցաւ . այսպէս նաև՝ օրինաւոր յառաջադիմութեան գաղափարը եղծանելով՝ և ապօրինաւոր փաստակար զարգացման մը ետեւէն երթալով՝ Սկեղեցւոյ գլխաւոր կանոններուն զանցառու եղան , և կրօնական դաստիարակութեան կարեւոր հանգամանքներն ու պայմաններն իրենց մտաց համաձայն մեկնեցին և չփոթեցին . հնազանդութեան հողին ազատամտութեան գաղափարներով պղտորեցին : Ասոնք են , որ այս օրուան օրս արձակ համարձակ հրապարակաւ Սուրբ Սկեղեցւոյ կարգադրութիւնները և հրամանները կանարգեն և կարհամարհեն . թէպէտև այն ամէն առաւելութիւններն ու բաւականութիւններն որ ունին՝ նոյն իրենց անարգած Սկեղեցւոյն մի միայն շնորհիւր ստոցեր են :

Այս անկարգութիւնները մտածելով՝ պէտք է ըսենք որ , սակից հասարակութեանս յառաջ եկած ողբալի դժբախտութիւնը քանի մ'օրուան գործ չէր , հապա՝ ժամանակէ մը 'ի վեր գործադրուելու վրայ էր . և թէ այս անկարգութեանց հեղինակներուն մտաց մէջ՝ Քրիստոսի Տեառն մերոյ Սկեղեցւոյն ուղղափառ և առողջ վարդապետութեան սկզբունքներն ու գաղափարը արդէն այլայլած և պղտորած էին : Աստի ս'վ կրնար գուշակել , թէ վերջը ո՛ւր պիտ'որ հասնէր , եթէ իրերը այսպէս յառաջանալու ըլլային , եթէ հասարակաց դաստիարակութիւնը այնպէս շարունակուէր՝ առանց օրինաւոր հսկողութեան՝ առանց կարեւոր վերաաւելութեան . և եթէ նոյն իսկ հոգւոց հոգը անոնց քմաց համաձայն սկզբունքներով հոգացուելու յարատեւէր : Մանաւանդ թէ , քանի որ այս իրենց հնարքները հասարակութեան մէջ կը տարածուէին՝ հեռեւզայ թիւը կ'աւելնար , նոյն իսկ իրենց խումբը նոր խումբերով կը զօրանալ , և այսպէս օրէ օր իրենց վիճակն ու վտանգը կը ծանրանար :

Ապագայ չարեաց առջին առնելու՝ կերպով մը տանջ ճարը հոգալու համար՝ ասեն ասեն կարեւոր միջոցները գործադրելու զանց չըրինք : Արդէն անոնց այնպիսի ապօրինաւոր գործքերը վերնագոյն իշխանութեան կտակածն ու մտանաւոր հսկողութիւնը իրենց վրայ զարթուցրէր . քանի քանի անգամ խրատներ և յանդիմանութիւններ արուեցան . քայց փոխանակ զգաստանալու՝ լաւ համարեցան խնդիրը բանալ և իրենց միտքը յայտնել կերպական եղանակաւ՝ թէ վերջապէս՝ իշխանութեանց խնամակալութենէ և հսկողութենէ ազատիլ կուզեն : Այս նպատակին ալ ապահովութեամբ հասնելու համար՝ աշխարհականաց հովանուորութեան՝ և պաշտպանութեան դիմեցին . իբր թէ ասոնք Քրիստոսի Ստուծոյ Սկեղեցւոյն հիմնադիրներն ըլլային , կամ թէ հաւատքի և Սկեղեցական բարեկարգութեան վերաբերեալ լնդիւրներու կարեւորային զիրենք քննիչ ու գատաւոր կարգել :

Ապաքէն՝ աս դժբախտ դիպուածներուն հետեւանքները շատ ցաւալի և սղբալի եղան . սակայն չարիք չկայ՝ որմէ Ստուած բարիք մը չկարենայ հանել , ինչպէս իրօք ալ այս դժբախտութեան վրայ երեւցաւ . վասն զի ամենքն ալ տեսան յիշեալ հնարքներուն վախճանը , իմացան այդ հեղինակներուն բուն գաղափարը , և համարեցան շատնեցուրնէ յուզուած այդ խնդիրներուն որպիսութեան ու նպատակին : Անշուշտ այս ամենայն բաւական պատճառներ են զմեզ համոզելու , թէ վէրքերուն բացուելովը և գաղտնութեան յայտնուելովը՝ փաստակար ախտին տարածումը անհնարին չէ խտփանելը , մանաւանդ թէ ասով առիթ մ'ալ կը տրուի հետքիչներուն ուղղութեան : Սակից զատ՝ ընդ հանուրը

նկատելով հասարակութեան օգուտը կը պահանջէ ու կը պարտաւորէ սր ասկից ետքը՝ դատարարակութեան և հոգւոց հոգատարութեան վերաբերեալ գործոց մէջ իւրաքանչիւր ոք՝ որոնց պարտքն է՝ զիանան թէ ինչ կարեւոր միջոցներ պիտի գործադրեն :

Բայց հոս չենք կրնար չյայտնել և այն մէկ ցաւն ալ, որ կը զգանք մանց վրայ, որոնք ՚ի սկզբանէ՝ իրաց սրպիսութեան ըստ բաւականին տեղեակ չի գտնուելով՝ գլորեցան և աղետալի դէպքերուն հեղեղը զիրենք տարաւ ձգեց ուր որ դուցէ չէին ուզեր գտնուիլ Սակայն կը յուսանք որ տոնց վրիպանքը երկար ատեն չի տւեր, վասն զի չենք կարծեր թէ արդէն ընդունած ճշմարիտ սկզբանց տպաւորութիւնը՝ անոնց սրտին մէջ բոլորովին խանգարած ըլլայ :

Արդ՝ դարձունենք խօսքերնիս ուստի սկսանք : Տարակոյս չկայ որ Քրիստոսի Տեառն մերոյ հիմնած ու հաստատած Եկեղեցւոյն վախճանն ու նպատակը հոգւոց յաւիտենական փրկութիւնն է . անոր ամէն ջանքը, բոլոր գործքերը՝ ուրիշ բան չեն դիտեր, բայց եթէ մարդս իր յաւիտենական երանութեան ուղղել, արքայութեան փառաց հասցունել : Այսու ամենայնիւ՝ աս ալ ստոյգ է, որ նեղ է ճանապարհը յաւիտենական կենաց, զոր կաթողիկէ Եկեղեցւոյ Հիմնադիրը հաւատացելոց՝ մանաւանդ իւր Եկեղեցական Պաշտօնէից առջև կը բանայ . կեղծ վարձանք չընդունիր, անհնազանդութիւնը կը մերժէ, և կը պահանջէ որ իւր հոգատակները և իւր գործակիցները՝ անկեղծ սրտիւ և խոնարհ հոգւով գործեն ու աշխատին իրենց և ուրիշներուն հոգւոց փրկութեան համար : Քրիստոսի հրամայած՝ այս թէպէտև պարզ բայց հիմնական սկզբունքներուն գաղափարը բոլորովին շփոթեցին հակառակութեան հեղինակները : Ասոնք՝ մեր Եկեղեցւոյն օգտին համար Սուրբ Աթոռին իւր Հովուական խնամակարութեամբ և Քահանայապետական իշխանութեամբ կարևոր դատած և հրամայուած կարգադրութիւնները առ թէ առնելով, իրենց կողմնակիցներուն միտքը նախապաշարեցին նոյն Սուրբ Աթոռին գէժ ՚ի քուս հասարակութեան . խառնակեցին իրաց վիճակը, ամեն բան տակն ու վրայ ըրին, մինչև յանդիմնեցան նախ իրենց հակառակառէր անհնազանդութեան հետեւութիւնները և պատասխանատուութիւնը՝ օրինաւոր իշխանութեան և նոյն իսկ Սուրբ Աթոռին վրայ նետելու : Այսպէս պատիր հնարքներով և պատրուակեալ խորհրդով՝ իրենց ընդգիծութեան բուն պատճառը պարզամտաց առջև ծածկեցին, և անոնց մտադրութիւնը իմաստակութեանց վրայ դարձունելով՝ հակառակութեան և անհնազանդութեան հոգւով զանանք բորբոքելու ջանացին . որն որ վերջապէս չէր կրնար զիրենք հերձուածի խորխորատը չձգել . ինչպէս իրօք ալ եղաւ : Աս եղաւ Քրիստոսի Տեառն մերոյ Սուրբ Եկե-

ղեցւոյն զերազոյն իշխանութեան գէժ մաքառողներուն գժբախտ փճակը :

Արաւցնէ՝ ինչպէ՞ս կրնային ասոնք գէժ գտնուիլ և ուրանուիլ Եկեղեցւոյ և իւր բարձրագոյն Հովուապետին կրօնական իրաւունքներն ու պարտքը՝ որ ունի հաւատացելոց կրօնքին վրայ հսկելու, անոնց հոգւոց փրկութիւնը հոգալու, յաւիտենական վախճանին համեմատ պարտաւորապէս միջոցները առջևին դնելու, և հոգևորական ու եկեղեցական կարգադրութիւնները ըստ հարկաւորութեան ժամանակին և պարագայից տնօրինելու : Ահաւասիկ՝ արտասուելի հակառակութեան բովանդակութիւնը : Այս Քրիստոսագիր անփոփոխելի սկզբունքներուն գէժ մաքառելով՝ հերձուածը հանդիսական կերպով հաստատուեցաւ :

Բայց՝ հերձուածոյ թեւ թիկունք եզոզ առաջնորդները՝ իրենց գործքերուն և հնարքներուն բարձև կերպարանք մը տալու, և յուզուած ինդիրները այլ և այլ օտար դոյներով իրենց հետևողաց աչքին նըկտրելու՝ ամենայն ճիգն ու ջանքը ի գործ դրին : Երբեմն հակառակութիւննին անձնական խնդիր է ըսին . երբեմն՝ վէճերնին ազգային իրաւանց վրայ է՝ Արքայան Քահանայապետին կարգադրութիւնները Հայոց Եկեղեցւոյն ներքին բարեկարգութեանը վրայ զօրութիւն չի կրնար ունենալ ըսին . երբեմն՝ այդ կարգադրութիւնները արտաքին գործադրութեանց կը նայի զրուցեցին . երբեմն՝ Քահանայապետական հրամանները Պատրիարքական իրաւասութեան հաւատար գրին, որով և Եկեղեցւոյ իշխանութիւնը բաժնեցին, և նոյն իսկ Եկեղեցին երկու պատուել և միութիւնը բոլորովին ջնջել ուզեցին . միտքերնին՝ այսպիսի պէտպէս նենդադատիր խնդիրներով բուն ճշմարտութիւնը անտես ընեն էր : Եստ յարմար է ասոնց Սուրբ Գրիգոր Աստուածաբանին սօգանդաւոր իր ժամանակին հակառակորդներուն գէժ : « Այսպիկ թէ » այսպէս իցեն, և անհնարին աղէտք չարեաց յայն հասեալ են՝ զի և հաւատացն խորհուրդ մեծ՝ յարուեստ իմն ճարտարութեան բանից զեղծա- » նիցի » . (1)

Բայց արդ՝ ամփոփենք խօսքերնիս այն կէտին վրայ՝ ուստի հետնաւորով մեր հակառակորդները մարտեցան . այսինքն խօսինք նոյն այն իշխանութեան պարզ և սեփական պայմաններուն վրայ, զորն որ Քրիստոս Տէրն մեր մեր հոգւոց փրկութեան համար հաստատած Եկեղեցւոյն շնորհեց . որով և կը բացատրուի թէ ինչպէս մեր հակառակորդները յանիրաւի կը յանդգնին պարզամիտները համոզելու թէ իրենք ալ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցւոյն կը վերաբերին, և միան-

(1) Գերբ . Ա .

դամայն կը հեռանի՝ թէ յանիրուի իրենք զիգենք ուղղութիւնս կ'անուանեն։ Աս վախճանաւ՝ հարկ է որ իշխանութեան ու նոյն իսկ Եկեղեցւոյ իշխանութեան սկզբնաւորութիւնը, և անոր եղանակը բացատրենք։ « Երանի՛ թէ » այս մեր բացատրութենէն նշոյլ մը ծագէր մեր խեղճ դիմադրողներուն սրբտին, որով « սակաւ մի ի խոյզ և ի խնդիր իրացն ճշմարտութեան պարագէին » : (1)

Ամէն իշխանութիւնն Աստուծոյ է, կ'ըսէ Պօղոս առաքեալ, « ոչ ուստեք է իշխանութիւնն եթէ ոչ յԱստուծոյ » (2) : Արեւ իցէ իշխանութիւնը թէ հայրական թէ ընկերական կամ թէ աշխարհային եւ թէ Եկեղեցական իշխանութիւնը ամէնքն ալ Աստուածային տրամադրութենէ յառաջ եկած են : Բայց այլ եւ այլ է ասոնց սկզբնաւորութեան եղանակը, զանազան են ասոնց միջոցները եւ անմիջական նպատակն ու վախճանը : Համառօտիւ բացատրենք :

Ամէն գոյութեան աղբիւրը, ամեն գործքի սկզբնապատճառը, ամէն իրաւանց ծագումը՝ Աստուած է : Ինչպէս եւ ամէն արարածոց վերջին վախճանը նոյն իսկ ամենաստեղծ արարիչն է : Աստուած մարդս ստեղծելու եւ մարդկային սերունդը սահմանելու ատեն նովին գործով հայրական իշխանութիւնը հաստատեց, եւ որովհետեւ մարդս ընկերաբան կենաց որոյած էր՝ ի հարկէ ասիկայ ընկերական իշխանութիւն մ'ալ կը պարունակէ : Այս երկու հայրական եւ ընկերական իշխանութիւններուն իրական եւ օրինաւոր ըլլալը Աստուած մեզի մասնաւոր եւ գրական միջոցով յայտնելը հարկաւոր չի տեսաւ : Վասն զի ասիկա մարդու ստեղծման եւ մարդկային ազգի սերնդեան որպիսութենէ բնականապէս կը հետեւի : Ասոր համար կ'ըսենք նաեւ որ աս իշխանութեանց սկզբնաւորութիւնը՝ բնական օրէնքէն յառաջ կուգայ, այսինքն թէ՛ Աստուծոյ ամենակարող արարչութեամբ բնական գործոց վրայ տղաւորած իրական եւ հիմնական օրէնքներէն, որով եւ նոյն իշխանութեանց Աստուծոյ կարգադրութենէ բխած ըլլալուն վրայ ալ տարակոյս չի մնար : Վասն զի Աստուած է բնութեան Սրարիչը եւ Տէրը ուստի և ամենայն գոյութեանց եւ իրաց սկզբնապատճառն ու աղբիւրը : Ասկէ յառաջ կուգայ որ հայր մը իր որդւոյն վրայ բարոյական իշխանութիւն մը կը գործածէ որուն կենաց ու գոյութեան պատճառը ինքն է կրնայ ըսել, թէպէտ եւ երկուքին ալ բնութիւնը մի եւ նոյն է, վասն զի Աստուած անոր հայրութեան կարողութիւնը հազորած ըլլալով հայրութեան պատկանեալ իրաւունքներն ալ հետեւաբար

(1) Գրիգ. Աստուածարան. Գրք. Ա.
(2) Հոովմ. Ժդ. 2 :

անոր շնորհած կըլլայ : Նոյնը համեմատաբար կրնանք ըսել նաեւ ընկերական կամ աշխարհային իշխանութեան վրայ : Աստուած մարդկային ցեղը ստեղծելով ընտանիքներն ալ հաստատեց, ասոնք ալ ըստ Աստուածային արամադրութեան բնականապէս ընկերակցութեան կեանք պիտի վարէին : Բայց աս ընկերակցութիւնը չէր կրնար կայանալ առանց իրեն պատշաճ ընկերական կառավարութիւն մը այսինքն կարեւոր իշխանութիւն մը ունենալու, որ կարենար նոյն ընկերութեան հոգ տանիլ : Մարդս խաղաղութեամբ կեանք վարելու ստեղծուած է : Բայց այլ եւ այլ կամքի տէր, եւ զանազան կրից ենթակայ ըլլող մարդկան բազմութիւն մը միատեղ խաղաղութեամբ կենցաղավարելու համար պէտք էր որ կառավարութիւն մը ունենար կարեւոր եղած իշխանութեամբ զարգարուած, որն որ նոյն իսկ բնական օրէնքէն Աստուածային կարգադրութենէ կը բղխի :

Եթէ աս ըսածնիս այլ եւ այլ աշխարհային եւ քաղաքական վարչութեանց եւ անոնց իրաւանց վրայ բաղդատէք կը տեսնէք որ ասոնց ալ սկզբնապատճառը Աստուած է, եւ նոյն իսկ բնական օրինաց հետեւութիւններն են՝ որ ըստ Աստուածային արամադրութեան իրենց վախճանին համեմատաբար կը ծառայեն :

Ուստի երբ որ մարդս, երբ որ ազգք եւ ազինք յարգութեամբ կը խոնարհին եւ կը հպատակին վերնագոյն կամքի մը, իշխանութեան հրամանի մը այս կամքը այս հրամանը արարչութեան հանգամանքներէն յառաջ եկած Աստուածային իշխանութեան ձայնը ճանաչելով Աստուածային կամաց եւ Աստուածային հրամանին հպատակած կ'ըլլան : Այս Առաքելոյն վարդապետութիւնը եւ անոր սքանչելի սկզբունքը օրով իշխանութեան հրամանը իւր զօրութիւնը կը ստանայ, եւ հպատակութիւնը իւր պատիւն ու արդիւնքը կ'ունենայ : Ինչպէս որդին իւր հօրը՝ որ մի և նոյն բնութենէ է, յարգութեամբ կը հպատակի : Վասն զի անոր վրայ հայրական իշխանութիւնը Աստուածային տրամադրութեամբ բնութեան հանգամանքներէ յառաջ եկած կը ճանաչէ, եւ ասով իր որդիական հպատակութիւնն ու հնազանդութիւնն ալ յարգու պատիւը կ'ունենայ : Նոյնպէս աշխարհային կառավարութեան մէջն ալ մարդուս յարգն ու պատիւը անկից կը յաճախէ որ մարդս իշխանաւորաց հրամանին հպատակելով իբրեւ Աստուածային իշխանութեան ներկայացուցիչներուն իր հնազանդութիւնը ընծայած կ'ըլլայ, որովհետեւ ամենայն իշխանութեան աղբիւրն ու սկզբնապատճառը նոյն իսկ բնութեան Ամենակարող Սրարիչն է : Ասոր համար Առաքեալը կը հրամայէ որ « ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ՝ ի հնազանդութեան կացցէ քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, եւ որ ենն

« Մատուցոյ կարգեալ են : Աստուհեան որ հակառակ կայ իշխանու-
 « թեան՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ . . . զի Աստուծոյ պաշ-
 « սօնեայ է . . . Աստուծոյ սպասաւոր է վրէժխնդիր ՚ի բարկութիւն
 « այնմ որ զչարն զործիցէ » (1)

Բայց աս ալ Աստուծոյ ամենակարող զօրութեանն ու իմաստու-
 թեան գործքն է որ մարդուս բանաւորութիւն եւ կարողութիւն շնոր-
 հեց որ խելամուտ ըլլայ բնութեան օրինաց , եւ կարենայ ամենայն ինչ
 ուղղել յաշտութեամբ իւր երջանկութեանը , եւ ամենայն առատու-
 թեամբ զարգարեց զանիկայ : Գիտեցէք երկնից հաստատութիւնը , քն-
 նեցէք երկրիս արարածները , տեսէք երկնից աստղերը , որպիսի՞ օրի-
 նաւոր կարգաւ կ'ընթանան ու կը յառաջանան իրենց Արարչին հաստա-
 տած կանոններուն հպատակելով . ինչպէ՞ս իրենց շրջաններուն սահմա-
 նէն դուրս չեն ելլեր , եւ իրենց աղբեցութիւնը մէկզմէկ զօրացունե-
 լէ ՚ի զատ նաեւ երկրիս վրայ իրենց զօրութիւնը կը ցուցունեն . օրու-
 ան մութն ու ըյտը մէկզմէկ կը յաշտողեն , տարւոյն եղանակները կար-
 դաւ անդադար կը փոփոխուին , բոյսերը , ծառերն ու տունկերը կը ծաղ-
 կին ու կը պողաբերեն : Այս ամենայն երկնից եւ երկրիս վրայ զար-
 մանալի կարգաւ Արարչին տուած օրինաց համաձայն մարդուս օգտին ,
 պիտոյից եւ զուարճութեան համար միշտ անընդհատ եւ անվրէպ կը
 կատարուի . որով կ'իմանանք թէ նոյն ամենակարող Տէրն է բոլոր մտա-
 ւոր , զգայուն եւ անզբայ արարածներու գործողութեանց ազբիւրն
 ու սկզբնապատճառը :

Գիտեցէք նաեւ մարդկային աղղի ընթացքը ՚ի սկզբանէ հետէ ,
 քննեցէք ազգաց եւ պետութեանց պատմութիւնը , այլ եւ այլ վարչու-
 թեանց դարէ ՚ի դար յաշտողութիւնը , եւ կը տեսնէք որ այս զարմա-
 նալի արարչութեան գործքը բովանդակ բնութեան եւ պատմութեան
 շարժումը վերջին եւ նախատես խորհրդով որոշեալ վախճանի մը կը
 դիմէ , որ է Աստուծոյ փառաւորութիւնը եւ մարդուս յաւիտենական
 երջանկութիւնը , որուն համար երկինք եւ երկիր յոնչէ գոյացան եւ են ,
 Վասն որոյ « Բնայն ինչ կ'ըսէ Առաքեալը :

Բայց աս գերագոյն վախճանին որ բնութենէ վեր գերբնական բա-
 րութիւն մըն է մարդկային կարողութիւնը եւ ընդհանուր արարչութեան
 հանգամանքները չէին զօրեր եւ չեն զօրեր : Երկինք եւ երկիր բովան-
 դակ արարածները եւ իշխանութիւնները մէկ տեղ դային , բոլոր աշ-
 խարհիս իմաստութիւնն ու հանճարը ամէն հնարքը փորձէին եւ փոր-
 ձեն՝ ամենեւին աղբեցութիւն մը չէին եւ չեն կրնար ընել այն գերբ-
 նական վախճանին վրայ , որովհետեւ ամենայն ինչ որ բնական է չունի

համեմատութիւն գերբնականին հետ որ է երկնից արքայութեան երջանկու-
 թիւնը , զորն որ ՚ի յաւիտեանս վայելելու համար մարդը ստեղծուած է :

Աստի՛ մարդը այս գերագոյն վախճանիս արժանի ըլլալու Աստու-
 ծային նախախնամութեան մասնաւոր եւ դրական յայտնութիւնը հարկ
 եղաւ : Հարկ եղաւ որ նոյն իսկ Որդին Աստուծոյ հրաշալի եղանակա-
 մը երկինքէն երկրիս վրայ գար կրօնական ընկերութիւն մը կազմէր՝
 այսինքն Սուրբ Եկեղեցին հաստատէր : Եւ ինչպէս աշխարհային ընկե-
 րութեան վրայ խօսելով տեսանք որ իւր վարչութեան համեմատ կա-
 ռավարութիւն մը եւ իշխանութիւն մը հարկաւոր է . այսպէս աս
 կրօնական ընկերութեան ալ պատշաճ կառավարութիւն մը պէտք էր ,
 որ զանիկայ իր գերբնական վախճանին յաւիտենական երանութեան
 ուղղէր հասցունէր : Անոր համար մարմնացեալ Որդին Աստուծոյ այս
 կրօնական ընկերութիւնը ուղղելու պէտք եղած օրէնքները դրաւ , եւ
 կառավարելու կարեւոր անձինքները որոշեց , անոնց իբրեւ իւր փոխա-
 նորդներուն հարկ եղած իշխանութիւնը շնորհեց իր կենդանի ձայնիւ
 եւ հրամանաւ՝ ըսելով թէ « տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկի-
 նըս եւ յերկրի » (1) : Երկնաւոր Հայրս Աստուած յաւիտենական ինձի
 ամէն իշխանութիւն տուաւ երկնից եւ երկրիս վրայ . ուրեմն՝ զնացէք ,
 ուսուցէք ամէն ժողովրդոց , սորվեցուցէք անոնց իմ ձեզի տուած հրաման-
 ներս եւ ես ձեզի հետ եմ մինչև աշխարհքիս վերջը : « Որպէս առաքեաց զիս
 հայր իմ , եւ ես առաքեմ զձեզ » (2) . ինչպէս Երկնաւոր Հայրս զիս խր-
 կեց եւ որով իշխանութեամբ որ զիս խրկեց աշխարհիս վրայ՝ նոյն իշխա-
 նութեամբ ալ ես զձեզ կը խրկեմ ժողովրդեան մէջ :

Այս է Քրիստոսի կանգնած կրօնական ընկերութեան , այսինքն հաս-
 տատած Եկեղեցւոյն սահմանադրութեան հիմը , այս է Եկեղեցւոյ տու-
 ած իշխանութեան ազբիւրն ու սկիզբը : Աստի աս կրօնական ընկե-
 րութեան կամ Եկեղեցւոյ սահմանադրութեան , եւ անոր իշխանութեան
 շնորհմանը ոչ բնութիւն ոչ աշխարհային իշխանութիւն ոչ մարդկային
 հնարք կամ իմաստութիւն ամենեւին գործակից եւ մասնակից չեղան :
 Աշխարհքիս վրայ երկրաւոր իշխանութիւններն ու վարչութիւնները կր-
 նան այլ եւ այլ աշխարհային պատճառներէ պէսպէս հանգամանքներէ
 սկզբնաւորութիւն մը առնուլ եւ հաստատուիլ : Պատերազմական յաղ-
 թութիւն մը , յաշտողութեան իրաւունքները , բազմութեան ձայնը եւ ո-
 րոշմունքը , եւ կամ ուրիշ ասոնց նման այլ եւ այլ դէպքեր՝ կրնան աշ-
 խարհային իշխանութիւնները չափաւորել եւ հաստատել : Բայց այս ա-

(1) Հոովմ . Ժդ . 1 . 2 . 4 :

(1) Մատթ . իր . 18 .
 (2) Յովհ . ի . 21 .

մենայն աշխարհային երկրաւոր եւ բնական պատճառները բնաւ եւ ամենեւին անդի չունին Քրիստոսի Եկեղեցւոյն եւ իւր իշխանութեանը սահմանադրութեան մէջ, որն որ բոլորովին երկնքէն եւ միայն երկնքէն շնորհուած է. եւ իւր աղբիւրն, սկիզբն ու պատճառը մի միայն Աստուած է. Աստուած է որ Եկեղեցւոյ աս առանձնաշնորհութիւնը անմիջապէս ուղղակի եւ գրականապէս հաղորդեց իր գերբնական Աստուածային իշխանութենէն մարմնացեալ բանին Աստուծոյ Քրիստոսի Տեառն մերոյ միջոցաւ :

Ահաւասիկ այս է Եկեղեցական իշխանութեան յատկութիւնը, զորն որ Պօղոս Առաքեալը Աստուածային պատգամաւորութիւն կը կոչէ. « վասն Քրիստոսի պատգամաւորութեան որպէս եւ Աստուծոյ բարեխօսութեամբ մեօք » (1) : Այս Աստուածային պատգամաւորութիւնը Առաքեալները ուղղակի Քրիստոսէն առին, եւ իրենց յաջորդները Եպիսկոպոստները նոյնը ձեռնադրութեան շնորհօք՝ եւ օրինաւոր առաքելութեամբ կը ժառանգեն :

Ասով մեր մտադրութեան անմիջապէս երկու զարմանալի խորհրդածութիւն կը ներկայանայ. այսինքն է՝ Քահանայական կարգին սրբազան խորհուրդը՝ որ կը տրուի ձեռնադրութեամբ, և միւսը տեսչութեան Աստուածային իշխանութիւնը որ կը տրուի առաքելութեամբ. այսպէս սուրբ հաւատքը մեզի կը սորվուցընէ Եպիսկոպոսաց առաւելութեան եւ յարգութեան վրայ : Որ եւ իցէ մեր արդիւնքը որ ունենանք, մեր սեպհական արժանաւորութիւնը, մեր անձնականութիւնը, մեր որ եւ իցէ առանձին յատկութիւնը եւ հանգամանքները՝ ատոնք ամենքն ալ մեր ընդունած Սրբազան Խորհրդոյն եւ այս Աստուածային իշխանութեան նկատմամբ ոչ ինչ են . Ամենագութ Տեառն շնորհքն է որ մեր վրայ կը հեղու եւ կը զօրացունէ եւ մեզ մեր մարդկային բնութենէ եւ անձնաւորութենէ վեր կը բարձրացունէ : « Առէք Հոգի Սուրբ, ըսաւ Քրիստոս Տէրը, եթէ ուրուք թողուցուք զմեզս, թողեալ լիցի նոցա . եթէ զուրուք ունիցիք կալեալ լիցի » (2) . եւ առաքելոց հետ մէկտեղ մեզի ալ ըսելէն ետքը՝ « առէք եւ կերայք այս է մարմին իմ որ վասն ձեր բաշխի », անմիջապէս հրամայեց՝ « զայս արարէք առ իմոյ յիշատակի » (3) . եւ հրապարակաւ յայտնեց թէ « Որ ձեզ լսէ ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ զիս անարգէ, եւ որ զիս անարգէ զառաքելն իմ անարգէ » (4) :

Ուստի յայտնի է որ այս Աստուածային պաշտամունքները կատարողը

(1) Բ. Կորնթ. Ե. 20 .

(2) Յովհ. Ի. 22. 25 .

(3) Ա. Կորնթ. Ժա. 24 .

(4) Գալ. Ժ. 16 .

մարդու չէ, նոյն ինքն Քրիստոս է որ իր պաշտօնէից պատգամաւորութեամբ մեզ կը տրամադրէ, իր շնորհաց ներքին աղբեցութիւնները մեզի կը պարգևէ, ինքն զինքը մեզի կը հաղորդէ, նոյն իսկ իր կենաց մեզ մասնակից կ'ընէ . և այսպէս մեզի հետ ուղղակի հաղորդակցութիւն մը ըսկսելով՝ հաւատքներնու շնորհիւ զմեզ կը պարտաւորէ՝ կուզէ՞ և կառաջնորդէ յաւիտենական երանութեան, երկնաւոր փառաց : Ասոր համար Առաքեալը կ'ըսէր թէ՝ մարդիկ զմեզ մեծարելով՝ զմեզ չեն մեծարեր, մեր անձնական արդիւնքը՝ մեր բնական ձիրքը՝ մեր որ և իցէ անձնական մասնաւորութիւնը թէ և ունենանք, ասոնք չեն զորն որ կը յարգեն . այլ մեր տկար և անզօր անձանց վրայ զՔրիստոս կը պատուեն ու կը մեծարեն՝ որուն անարժան պաշտօնեաներն ենք, և իւր Աստուածային խորհրդոց մատակարարք : « Այսպէս համարեցեն զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քրիստոսի՝ և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ » (1) : Ապա ուրեքն Եպիսկոպոսին վրայ, Քահանային վրայ, աշխարհքիս որ և իցէ բնական և մարդկային յատկութիւններէ վեր հրաշալի սեպհականութիւն մը կայ : Իրօք ալ այսպէս է. Յիսուս Քրիստոս է՝ զոր անոնք կը ներկայացունեն . Յիսուսի Քրիստոսի առաքելութիւնն է՝ որ կը վարեն . Յիսուս Քրիստոս է՝ որ անոնց բերնովը կը քարոզէ . Յիսուս Քրիստոս է՝ որ իր պատգամները անոնց միջոցաւ կը մեկնէ . Յիսուս Քրիստոս է՝ որ իր անմահ պատարագը անոնց ձեռքը իւր երկնաւոր հօր կը մատուցանէ . Յիսուս Քրիստոս է՝ որ անոնց սպասաւորութեամբ կը մկրտէ, սուրբ խորհուրդները կը մատակարէ . վերջապէս՝ միով բանիւ բովանդակելու համար, Յիսուս Քրիստոս է՝ որ անոնց ձեռքը կը կառավարէ, կը մաքրէ, կ'արդարացունէ հոգիները, և արքայութեան արժանի կ'ընէ :

Ահաւասիկ հոգևոր իշխանութեան գերբնական բարձրութիւնը, և այդ իշխանութիւնը գործադրող պաշտօնէից վերնային յատկութիւնը, ատոր համար է՝ որ այս վերնային իշխանութիւնը՝ այս Աստուածային պատգամաւորութիւնը վարող անձինքներու առջև՝ ով ոք և իցէ որ խոնարհի, և անոնց հպատակի՝ թէպէտև առաւելութեամբ՝ ազնուականութեամբ և պատուով ճոխացեալ ալ ըլլայ, երբէք իր աւագութեանը անարգանք մը չը հասցուներ : Թէև մէկը աշխարհքիս բոլոր իշխանութեանց տէրն ըլլայ, ամէն կերպ աւագութիւն և արժանաւորութիւն ունենայ, Սողոմոնի չտփի իմաստուն, Սամսոնի պէս զօրաւոր, Դաւթի նման արգար, մեծին Աղեքսանդրի հաւասար ըլլայ՝ Եկեղեցւոյ Պաշտօնէից ցուցուցած հպատակութիւնն ու անսացողութիւնը մի միայն Քրիստոսի ուղղուած է՝ որ զերենք իր պաշտօնեայներն անուաներ ու կարգեր է : Անոր համար

(1) Ա. Կորնթ. Դ. 1 .

Պաղատ Առաքել կը գրուցէ « Ս. յնպէս համարեցեն զմեզ մարդիկ իբրև զպաշտօնեայս Քրիստոսի և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ » (1) :

Այսպէս է՝ Սիրելիք, դուք ալ աներկիւղ և անկասկած կրնաք անոնց խօսքերը մտիկ ընել, անոնցմէ ներումն ընդունիլ, անոնց հրամաններուն հպատակիլ : Ինչու որ անոնց գործադրած իշխանութիւնը իրենցը չէ, այլ Աստուծոյ է՝ որ երկնից և երկրիս Արարիչ ամենակարող Տէրն է :

Տեսանք ուրեմն Եկեղեցական իշխանութեան բուն էական իսկութիւնը, որով կ'որոշուի և կը զատուի այս աշխարհքիս իշխանութիւններէն, ըսել կ'ուզեմ թէ՛ աս Եկեղեցական իշխանութեան սկզբնաւորութիւնը է ապէս գերբնական է, անոր անմիջական աղբիւրը մարմնացեալ Որդին Աստուծոյն է, բնութեան օրէնքներէն բոլորովին վեր է, աշխարհային իշխանութեանէ վը յառաջ եկած չէ. ուստի անկարելի է բնական կարգի մը զանիկա իջեցունել, անոր գործադրութիւնը մարդկանց կամքին ու հաճութեանը կաշկանդել, ամենայն՝ որպիսի և իցէ՛ երկրաւոր իշխանութիւն անկարող և անզօր է այս Եկեղեցւոյ հոգևոր և գերբնական իշխանութիւնը և իր օրէնքները ըստ հաճոյս տրամադրելու՝ կամ՝ փոփոխելու : Պէտք է որ մարդս զանիկա յարգէ ըստ այնմ կարգի՝ ըստ որում մարմնացեալ բանն Աստուծոյ կարգադրեց և հաստատեց :

Սակայն՝ յառաջ երթալով այս գերբնական իշխանութեան ձեւը մեկնենք, որն որ մինչև հիմա ըսածներուս հետեւութիւնը ըլլալով՝ զանոնք աւելի ևս բացատրելու և պարզելու առիթ մ'ալ կ'ըլլայ :

Հոգևոր իշխանութեան սկզբնաւորութիւնը դրականապէս գերբնական ըլլալով՝ ի հարկէ կը հետևի որ իր ձեւը, այսինքն իր գործողութեան եղանակը և հանդամանքները՝ նոյնպէս իրեն սեփական և գերբնական ըլլան : Քննենք :

Ըսենք որ՝ Քրիստոս Տէրն մեր՝ Եկեղեցւոյ հիմնադիրն ու օրէնագիրը՝ Առաքելները իրեն պատգամաւոր կարգելով իր Երկնաւոր Հօրմէ առած Աստուածային իշխանութիւնը անոնց շնորհեց, և Աստուածային առաքելութիւնը անոնց յանձնեց, որպէս զի յաւիտենական արքայութեան ճամբան և անոր միջոցները բոլոր աշխարհքիս սորվեցունեն « ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ » (2). անոնց յայտնեց նաև, և ըսաւ թէ՛ « որ հաւատայ . . . կեցցէ » (3) :

(1) Ա. կորնթ. Դ. 1.
(2) Մատթ. ԻԸ. 20.
(3) Մարկ ԺԳ. 16.

Այս հրամանաւ Քրիստոս Տէրն մեր երկու հիմնական պայման կը դնէ առջևնիս՝ յաւիտենական փառաց հասնելու համար. որոնց մէկը հաւատայն է, « որ հաւատայ . . . կեցցէ » և միւրը իւր ամէն հրամանները կատարել. « պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ » : Մէկ խօսքով կ'ուզէ ըսել թէ նախ և յառաջ պէտք է հոգւով հաւատանք հաւատոյ ճշմարտութիւնները. երկրորդ կամակար հպատակութեամբ կատարենք իր հրամանները : Ուրեմն երկու բան հարկաւոր է մեր հոգւոյն փրկութեան և երջանկութեան. Հաւատք և Հնազանդութիւն : Քրիստոսի վարդապետութիւնն ու պատուիրանները մէկ ազգի մէկ ժողովրդեան համար չէր, այլ բովանդակ աշխարհքիս համար, « Երթայք յաշխարհ ամենայն և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց » (4) : Բոլոր աշխարհքիս երեսը Առաքելոց առջևը ընդարձակ դաշտ մը բացուեցաւ. ամենայն բանաւոր արարածոց վրայ իրենց գերազոյն պաշտօնը կատարելու, իրենց գործադրութիւնը բարուք եւ բնաւորութեամբ, սովորութեամբ եւ օրինօք իրարմէ տարբեր բաղմամբիւ ազգաց եւ ժողովրդոց հետ պիտոր ըլլար, զորոնք Առաքելները մի եւ նոյն հաւատոյ միութեան հոգւով եւ հնազանդութեան կապանօք մէկ ազգ մէկ ժողովուրդ Քրիստոսի պիտի յարգարէին : Յայտնի է որ այսպիսի սքանչելի եւ ճշմարտապէս երկնաւոր գործողութեան անվրէպ կատարմանն ալ հարկ էր որ Քրիստոս Տէրն մեր պատշաճաւոր միջոցներն ալ իր պաշտօնէից շնորհէր. կ'ուզենք ըսել որ անոնց բարձր առաքելական գործոց ու վարչութեան համեմատ իր ամենախնամ իմաստութեամբը ազգու կարգադրութիւններ եւ զօրաւոր կառավարութիւն մը եւ տեսչութեան օրէնք մը տալու էր. որ է ըսել իրաւաբանական, դատաստանական եւ օրէնսդրական արտաքոյ կարգի լիուլի իշխանութիւն մը իր Առաքելոց շնորհելու էր, ինչպէս իրօք ալ շնորհեց խոստանալով միանգամայն որ երկրիս վրայ ինչ որ անոնք արձակեն ինքն ալ յերկնից զանիկա արձակուած պիտի հաստատէ, եւ ինչ որ երկրիս վրայ կ'ապեն ինքն ալ յերկնիս կ'ապեալ պիտի հաստատէ. « զոր կ'ապիցէք յերկրի » եղիցի կ'ապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս » (2) :

Սակայն այսչափս ալ բաւական չի համարեցաւ Աստուածային հիմնադիրը : Վերոյիշեալ պատճառներուս նկատմամբ Եկեղեցւոյ բարուք վարչութեանը համար, նա՛ մանաւանդ վարդապետութեան եւ հպատակութեան միութիւնը պահելու համար հարկաւոր տեսաւ Առաքելներուն այսինքն իր Պատգամաւորներուն մէջն ալ միութեան կապը ան-

(1) Մարկ. ԺԳ. 16 :
(2) Մատթ. ԺԲ. 18 :

խղելի պահել, եւ այս պատճառաւ անոնցմէ մէկը իրենց Վրուխ կայր-
 գեց, որ ամենուն վրայ հակէր, ամենուն հոգ տանէր, զամենքն ալ
 ուղղէր, եւ ամենքն ալ անոր յարգ պատիւ եւ հնազանդութիւն ըն-
 ծայէին, եւ այսպէս իր Պատգամաւորները իրենց մէջ, նաև Պատգա-
 մաւորները իրենց ժողովուրդին հետ համաձայն, ամէնքը միանգամայն
 Պատգամաւորք եւ ժողովուրդք ՚ի միասին իրենց Վրուխ համամիտ եւ
 համախորհուրդ գտնուելով Քրիստոսի խորհրդական մարմնոյն՝ այսինքն
 Եկեղեցւոյ՝ միութիւնը կարենային պահել, վերջապէս սուրբ Գրոց խօս-
 քին համեմատ ամենքը միատեղ կարենային կազմել « մի հօտ եւ մի հովիւ »
 (1) : Ահաւասիկ այսպէս կատարելագործեցաւ այս Աստուածային գործ-
 քը՝ մարդուս յաւիտենական երանութեան համար հաստատուած Եկե-
 ղեցւոյ սահմանադրութիւնը : Բայց հարկ է որ քիչ մ'ալ աւելի պար-
 զենք աս զլխաւոր խնդիրը :

Ստոյգ է Եկեղեցւոյ Աստուածային հիմնադիրը Առաքեալներուն
 ամենուն ալ իւր երկնային իշխանութիւնը շնորհեց, բայց ամենուն ալ
 մի եւ նոյն աստիճանաւ շնորհած չէ : Երկոտասան Առաքելոց մէջէն
 Պետրոսը ընտրեց, եւ Պետրոսը ամենուն նախամեծար ըրաւ, նախ եւ
 յառաջ Պետրոսէն սկսաւ եւ Պետրոսին վրայ Եկեղեցւոյ բովանդակու-
 թիւնը դրաւ մեկնեց եւ պարզեց : Տեսէ՛ք ինչպէս զՊետրոս Եկեղեց-
 ւոյ անխախտ և անշարժ հիմ կարգեց ըսելով « Դու ես վէ՛մ, եւ ՚ի վե-
 րայ այդը վիմի շինեցից զԵկեղեցի իմ » (2) : Ուրիշ Առաքեալներէն
 զատ Պետրոսին տուաւ բարձրագոյն իշխանութիւնը արածելու եւ հո-
 վուելու գաւիտէքը եւ խաչինքը առանց մէկու մը բացառութեան, « ա-
 » բաժեա՛ զգառինս իմ, արածեա՛ զոչխարս իմ » (3) : Ինչպէս յայտնի է՝
 ըստ Սուրբ Գրոց արածելը՝ կառավարել ըսել է (4) . եւ այսպէս ըստ
 մեկնութեան Սրբոց Հարց կը նշանակէ կառավարել հաւատացեալները
 եւ առաջնորդները որ կարգի եւ աստիճանի եւ առաւելութեան ըլլան :
 Տեսէ՛ք դարձեալ որ նախ եւ առաջ մասնաւորապէս եւ մի միայն Պետ-
 րոսին կուտայ ամենուն վրայ գործադրելու վերնագոյն գատաստանական
 եւ օրէնագրական իշխանութիւնը . « տաց քեզ, կըսէ, զլիականս արքայու-
 » թեան երկնից, եւ զոր միանգամ կապեցես յերկրի, եղիցի կապեալ
 » յերկինս . եւ զոր արձակեցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս » (5) :

(1) Յովհ. Ժ. 16 :
 (2) Մատթ. ԺԳ. 18 :
 (3) Յովհ. ԻԱ. 15. 16 :
 (4) Մենդ. Ծ. 21. — Բ. Թագ. Ե. 2. և Է. 7. — Ա. Մնայրդ. ԺԱ. 2. — Երեմ. ԻԲ.
 2. — Միք. Է. ԺԴ. — Ա. Պետր. Ե. 2 :
 (5) Մատթ. ԺԳ. 19 :

Քրիստոս Տէրն մեր Պետրոս Առաքեալը իւր Նղբարց մէջէն ընտրելով
 զանիկայ ամենայն իշխանութեան լրութեամբ կանխաւ հաստատեց, որ-
 պէս զի հասկընանք որ իշխանութիւնը ամենէն յառաջ մէկուն յանձ-
 նելով՝ ետքէն ուրիշներուն չի հաղորդուեցաւ՝ եթէ ոչ այս թէութեամբ
 միայն որ միութեան Վրուխ ու կեդրոն ըլլողին վրայ նոյն իշխանութիւ-
 նը միշտ լիուլի եւ ամբողջ մնայ . Սուրբ Կիսրիանոսին ըսածին պէս
 թէ իշխանութեան միութիւնը իշխաններուն միութեանը մէջ կը գտնուի
 (1) : Եւ նոյնը կը հաստատէ Սուրբ Ոկտավիանոս, Քրիստոս Տէրն մեր,
 կըսէ, Պետրոս Առաքեալը ամենէն առաջ նախամեծար ընտրեց եւ ա-
 մենուն վրայ կարգեց՝ Եկեղեցւոյ միութիւնը պահելու համար, եւ մի
 միայն Պետրոս Առաքեալին շնորհեց երկնից արքայութեան բանալիք-
 ները՝ ետքէն ուրիշներուն ալ հաղորդելու համար, որպէս զի այս իշ-
 խանութիւնը գործադրողները ամենն ալ անոր հետ միաբան կենան ա-
 ռանց բաժնուելու երբէք ան աղբիւրէն այն իրենց բարձրագոյն իշխա-
 նաւորէն : Անոր համար նաեւ Պետրոս Առաքեալին հաւատքը հաստատելով
 հրամայեց որ ինք իբր վերնագոյն հովիւ և վարդապետ եւ գատաւոր՝
 հաւատոց եւ վարդապետութեան վերաբերեալ խնդիրներու վրայ կա-
 րուոր գատած ժամանակները ինք իր եղբայրները որ իրեն հետ ընդ-
 հանուր հօտին հոգատարութեանը կաշխատին՝ ուղղէ եւ հաստատէ, եւ
 այսպէս ամենն ալ հաւատոց եւ հաղորդութեանը մէջ պահէ : « Ես ա-
 » ղաչեցի վասն քո զի մի պակասեցին հաւատք քո եւ դու երբեմն
 » դարձցիս եւ հաստատեցես զեղբարս քո » (2) :

Աստուածային նախախնամութեան անքննելի խորհուրդն է որ թոյլ
 կուտայ որպէս զի այսչափ ընդարձակ տարածուած Եկեղեցւոյ անձինք-
 ներու մէջ Առաքելոյն ըսածին պէս երբեմն երբեմն հերձուածներ եւ
 հերետիկոսութիւններ պատահին, « Եւ հերձուածք լինելոց են ՚ի ձեզ
 » զի որ ընտիրն իցեն ՚ի ձեզ՝ երեւեցին » (3) : Ուստի հարկ է որ Քրիստո-
 սի կարգադրած Եկեղեցին այնպիսի հաստատուն սահմանադրութիւն մը
 ունենար, որ կարենար հերձուածներուն եւ աղանդներուն յարձակմանց
 դէմ կենալ, « դրունք դժօխոց զնա մի՛ յաղթահարեցեն » (4) : Յիրա-
 շի դրունք դժօխոց այսինքն է հերձուածք եւ հերետիկոսութիւնք
 պիտոր չկարեն երբէք յաղթել Եկեղեցւոյ : Ասանկ խոստացաւ Քրիստոս
 եւ ասանկ ալ պիտոր ըլլայ ՚ի յաւիտեան : Բայց Քրիստոս որ աս աննա-
 հանջելի խոստմունքն ըրաւ իր Եկեղեցւոյն, անոր նաեւ առ այս կարե-

(1) Կիսր. Թղթ. ՀԳ :
 (2) Ղուկ. ԻԲ. 52.
 (3) Ա. Կորն. ԺԱ. 19.
 (4) Մատթ. ԺԳ. 18.

և որ միջոցները բաւական զօրութիւնն ալ շնորհեց իր սահմանադրութեան եւ առանձին իր միութեան մէջ, որով իւրաքանչիւր մաս մէկ մէկու հետ միաբանութեամբ ընդ Պլիսոյն կապեալ եւ ամենքը մէկանց միացեալ բովանդակութիւն մը կը կացուցանեն . որն որ իւրաքանչիւր մասը փոխադարձ կը զօրացուցանէ, եւ այսպէս առ սքանչելի միութեան մէջ իւրաքանչիւր մասը կը գործէ իւր կեդրոնին հետ միացեալ բովանդակութեան զօրութեամբը, եւ աներկիւղ ողջամիտ վարդապետութեան եւ ուղղափառ միութեան հակառակ եղած հերձուածներուն եւ աղանդներուն յարձակմանց դէմ անվեհեր արիաբար կը մարտի, զանոնք կը նուաճէ կը յաղթէ եւ կը կործանէ : Ահաւասիկ Քրիստոսի Եկեղեցւոյն միութեան զօրութիւնն ու իշխանութիւնը :

Արդարեւ սքանչելի է Քրիստոսի Տեառն մերոյ իր Եկեղեցւոյ եւ անոր գերագոյն Հովուապետին շնորհած իշխանութիւնը : Բայց կը համարձակիմ միանգամայն աւելցունելու որ Քրիստոս Տէրն մեր իւր վախճանին՝ որուն համար Եկեղեցին հաստատեց, բաւական հոգացած չէր ըլլար՝ եթէ այս իշխանութիւնը միայն Պետրոսի Առաքելապետին անձին վրայ սահմանեալ եւ չափաւորեալ ըլլար, եւ անոր յաջորդները անկից զուրկ մնային, ապագայ ժամանակներուն մէջ չի շարունակէր : Աստուածային հիմնադրին սահմանած Եկեղեցին պիտի շարունակէր « մինչև ՚ի կատարած աշխարհի » . այս Եկեղեցին աշխարհ ամենայն տարածուած ամէն ազգ ու ազինք պիտոր պարունակէր, բոլոր աշխարհքիս վրայ անթիւ մասնաւոր Եկեղեցիներ մէկ մէկու պիտի յաջորդէին եւ պէտք էր որ ամեն ատեն անոնց այլ եւ այլ պիտոյից հոգ տարուէր, հերձուածներու եւ հերետիկոսութեանց դէմ իւր միութեան ամբողջութիւնը եւ վարդապետութեան ողջմտութիւնը միշտ հաստատուն եւ անարատ պահուէր : Արդ Քրիստոսի Եկեղեցւոյն հանգամանաց հարկաւորութեանէ էր, որ յանձն առաքելապետին շնորհած բարձրագոյն անյաղթելի եւ անվրէպ իշխանութիւնը այնպէս անպակաս եւ ամբողջ իւր յաջորդներուն ալ աւանդուէր :

Եկեղեցւոյ տասնեւինը դարայսչափ ալէկոծութեանց մէջ անցուցած դիպուածները եւ իւր շարունակեալ պատմութիւնը աչքէ անցուցէք, մանրամասնաբար քննեցէք, կը տեսնէք որ մի միայն Առաքելապետին յաջորդներն են որ Քրիստոսի բարձրագոյն իշխանութեամբ բովանդակ Եկեղեցին ուղղեցին կառավարեցին եւ ուսուցին, եւ երբէք անոնց հաւատքը չի պակսեցաւ ըստ խոստման Աստուածային հիմնադրին : Ասոր ներհակ կը տեսնենք որ միւս Առաքելոց յաջորդներուն անթիւ մասնաւոր Եկեղեցիները ժամանակ ժամանակ երբեմն մէկը երբեմն մէկալը դժբախտաբար կամ միութեան կեդրոնին հետ շարունակաբար

միշտ հաստատուն չկենալով անկից հեռացեր եւ միութեան ամբողջութենէ եւ հաղորդակցութենէ բաժնուեր են, եւ կամ հաւատոյ ողջմտութիւնը միշտ անարատ պահած չեն . և այսպէս Առաքելապետին յաջորդները հարկադրուեր են ատոնց հովիւները եւ ատոնց ժողովուրդը երբեմն մէկը երբեմն միւսը ուղղելու ըստ Աստուածային հրամանին՝ « եւ դու . . . հաստատեցես զեղբարս քո » : Այսպէս Քրիստոս պատուիրեց եւ կատարուեցաւ . ասանկ ՚ի սկզբանէ հետէ սուրբ Եկեղեցին իմացաւ եւ այսպէս ալ ամենայն ողջամիտ Հայրապետք եւ եկեղեցւոյ հովիւները հաւատացին եւ գործքով ցուցուցին : « Ես Ձեր երանութեանը հպատակելով եւ Պետրոսին Աթոռին հաղորդութեան մէջ » հաստատ կենալով Յիսուսի Քրիստոսի հրամանները կատարած կ'ըլլամ, կ'ըսէր Սուրբ Հերոնիմոս՝ Պամասոս Քահանայապետին . ով որ Ձեր զի հետ չի ժողվեր՝ կը ցրուէ, այնպիսին Յիսուսի Քրիստոսի չի վերաբերիր այլ Նեախին » (1) : Այս խոստովանութենէ այլազգ չէր ուրիշ Սրբոց Հարց համադումը եւ վարդապետութիւնը որոնք ամէն ժամանակ ամէն առթի մէջ մասնաւոր շատագովութեամբ կը յարդէին Առաքելապետին Աթոռոյն յատկութիւնները, եւ ամենուն վրայ անոր ունեցած սեպհական աւագութիւնը, անուանելով զանիկա « Պլիսաւոր իշխանութիւն, միութեան աղբիւր, Պետրոսի յաջորդութիւն, Քահանայապետական բարձրագոյն աստիճան, Մայր Եկեղեցի որ ուրիշ Եկեղեցիներուն հոգ կը տանի, Եպիսկոպոսութեան բանալի, Աթոռ որ մէ կը տարածուի կառավարութեան ճառագայթները, մի միայն առաջին Աթոռ ուր կը բովանդակի միութեան կեդրոնը, ուր կը պահուի միութիւնը, Եկեղեցական իշխանութեան կենդանի արմատ, կենդանի ծառ որմէ բաժնուած ճիւղը անպտուղ կը մնայ, աղբիւր ՚ի բղխեալ որմէ կտրուած վտակը կը ցամքի » . կը յիշէք որ ասոնցմով եւ այլ ուրիշ ասոնց նման բազմաթիւ առաւելութեան յատկութիւններով Առաքելապետին Աթոռը եւ անոր յաջորդները շատագովեցին՝ Սուրբ Գիորգիոս, Սուրբ Կիպրիանոս, Սուրբ Աթանաս, Սուրբ Արոսպէր, Սուրբ Ոկտավիանոս, եւ Քաղկեդոնի եւ Կոստանդնուպոլսոյ եւ այլ Տիեզերական ժողովքները, Յունաց, Հայոց, Ափրիկեցւոց, Ասիացւոց, Սպանիացւոց, Փաղղիոյ՝ Սուրբ Հարքն ու Հովիւները, մէկ խօսքով բովանդակ Արեւելք եւ Արեւմուտք : Ասոնց մասնաւոր վկայութիւնները ըստ բաւականին նշանակուած ունիք առ վերջի ժամանակներս ալ հրատարակուած այլ եւ այլ դիրքերուն մէջ, եւ մանաւանդ Սրբազան Քահանայապետին անցեալ տարւոյ Յունուարի 6. ին մեր Պատրիարքութեան ուղղած մեծարեալ Երջարեալականին մէջ :

28056-62 (1378)

(1) Թղթ. 15.



Այս վկայութիւններուն զօրութիւնը աւելի ևս կը հաստատեն բոլոր աշխարհքիս վրայ տարածուած այլ և այլ Եկեղեցիներու, Գաւառներու, և զանազան բնաւորութեամբ տարբեր ազգաց և ժողովրդոց այս վարդապետութեան համաձայն աւանդութեան պաշտօնական գիրքերը: Ի սկզբանէ հետէ հրապարակաւ Եկեղեցիներուն մէջ ժողովրդեան առջև կ'երգեն կը քարոզեն « Պետրոս Առաքեալ Եկեղեցւոյ հիմն, Եկեղեցւոյ գլուխ, վէմ հաւատոյ, երկնից դռնապան, երկնից փակակալ »: և այլ ուրիշ այսպիսի բազմաթիւ վկայութիւնները, որոնք միշտ Առաքելապետին և իր Աթոռոյն վարդապետական և իշխանական աւագութիւնը կը հաստատեն. աւելորդ է զանոնք մի ըստ միովէ հոս տեղս յառաջ բերել (1): Բաւական է միայն սա խորհրդածութիւնս ընել որ այսչափ ընդհանուր 'ի նախնեաց 'ի վեր սկսեալ և հնացեալ աւանդութեան համաձայնութիւնը անկարելի է ուրիշ կերպով մեկնել. բայց եթէ խոստովանելով որ անիկա Առաքելոց ժամանակէն, ուստի և Առաքելոց աւանդութենէ յառաջ եկած է:

Արդ առանց այլևս խօսքերնիս երկնցունելու մինչև հիմայ ըրած խորհրդածութիւններնու հետեւութիւնները ամփոփենք: Ըսինք որ Եկեղեցւոյ իշխանութիւնը ըստ կարգի մի միայն է, ըստ սկզբնաւորութեան դրականապէս գերբնական է, ըստ իւր օրինաց և եղանակին երկնային է. աշխարհային իշխանութիւններէ բոլորովին տարբեր, ամենայն մարդկային կարողութենէ վեր, անկախ ամենևին արարածական ազդեցութիւններէ, ազատ մարդկային կամքէ և միջամտութենէ, անբաժանական կերպով միացեալ իւր աղբեր և իր բարձրագոյն նուիրապետին հետ: Ուստի ինչպէս մի միայն է իւր իշխանութիւնը, իւր ըսկզբնաւորութիւնը. այնպէս ալ մի միայն է իւր կառավարութիւնը. երկ կողմանի չէ իշխանութիւնը, երկու սկզբնաւորութիւն, երկու կառավարութիւն, երկու գոյութիւն բնաւ չի ճանչնար. արևելք և արևմուտք ծագաց 'ի ծագս աշխարհի մի և նոյն իշխանութիւնն է որ իր լուսովը բոլոր տիեզերաց եկեղեցիները կը լուսաւորէ, բոլոր աշխարհք իր ճառագայթները կը ծագէ. բայց լոյսը մէկ է որ ամէն կողմը կը սփռի՝ առանց բաժնելու այն խորհրդական մարմնոյն միութիւնը (2): Ինչպէս

(1) Տես խորհրդատեար Յունաց, որ Ս. Բարսղի Աղեքսանդրեան կոչի: — Մաշտոց Եկեղեցւոյն Սպանիոյ եւ առանձինն խորհրդատեար՝ զոր Մողարաբացոց անուանեն: — Խորհրդատեար Գիսկորոսի Եպիսկոպոսի Կորդուացոց ի լերինս Արարատայ, Հտ. Բ. Հաւաք. Արևել. խորհրդ. առ Ռենդոտեայ: — Մաշտոց Քահանայապետական Ասորւոց Ենասորականաց ի Պարսս, ի Հնդկիս, առ Քաթար եւ առ Սինէացիս. առ Մորիսնայ վասն ձեռնադրութեանց Մ. Բ. — Խորհրդատեար Եթովպացոց, լը Պրէօն Հտ. Ա. — Մամարիոս վասն սկզբնաւորութեան եւ հնութեան Քրիստոնէից Հտ. Է:

(2) Կիսր. Թղթ. Հգ.

մի է Եկեղեցին Քրիստոսի, ինչպէս մի է հաւատք, ինչպէս մի է Եկեղեցւոյ Աստուածային հիմնադիրը Քրիստոս Տէրն, այնպէս ալ մի և մի միայն անսպառելի և անայլայլելի է անոր իշխանութիւնը և իշխանութեան կեդրոնն ու Գլուխը: Ուստի ով որ աս կեդրոնէն կը զըրկուի՝ Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցւոյն ալ չի վերաբերիր, այնպիսին ալ յանիրաւի ինք զինքը ուղղափառ կ'անուանէ: Ահաւասիկ մարդուս յաւիտենական փրկութեանը համար՝ մարմնացեալ բանին Աստուծոյ՝ անձամբ և իւր Աստուածային զօրութեամբ յօրինած և հաստատած աստուածախնամ և հրաշալի գործքը:

Գուք՝ Սիրելիք, կրնաք յօրինել շինել և քանդել ինչպէս որ կ'ուզէք ձեր յատուկ մասնաւոր գործքերը, կամ ատեն ատեն փոխել անոր ձևը և եղանակը և ուրիշ կերպարանք տալ: Բայց դուք բնաւ իշխանութիւն չունիք Աստուծոյ գործքին վրայ: Ամէն անգամ որ Եկեղեցւոյ գործքերուն վրայ ձեռունիդ երկնցներու փորձէք, ամէն անգամ որ անոր իշխանութեան, անոր վարդապետութեան, անոր կարգադրութեանց միջամուխ ըլլալ ուզէք, ան իրաւունք ունի ձեզի կրկնելու Քրիստոսի խօսքը, որուն կողմանէ սուսնդապահ և թարգման կարգուած է, թէ « իմ վարդապետութիւնը չէ իմ, այլ այնորիկ որ առաքեացն զիս » (1). Իմ քարոզած իմ սորվեցուցած վարդապետութիւնս իմն չէ, այլ զիս առաքողին իշխանութիւնն է, անոր վարդապետութիւնն է: Մարդկային սահմանադրութիւնները կարգադրութիւնները շատ քիչ զանոնք յօրինողներուն կամքէն կախեալ են, բայց մարդկանց հոգւոց փրկութեանը համար Աստուծոյ Ամենակարողին սահմանած Աստուածային կարգադրութիւնը Աստուածային նախախնամութենէ հաստատուած Եկեղեցւոյն ուղղակի գործքն է և անոր հոգատարութեան յանձնուած է: Աստուած զանիկայ մարդկանց միջամտութենէ ազատ ըրաւ: Ազգք և աղինք ժողովուրդք և տէրութիւնք ազատ են ըստ իւրեանց կամաց իրենց աշխարհայէն գործքերուն պատշաճ տեսած կարգադրութիւններն ընել, քաղաքական կառավարութիւննին այլայլել, ընկերակցութեան վարչութեան եղանակը կարգաւորել, սահմանադրութիւննին կերպաւորել, կանոնին փոխել ինչպէս որ իրենց օգտին պատշաճ տեսնեն. բայց Եկեղեցւոյ սահմանադրութիւնը, իւր կառավարութեան եղանակը, իւր իշխանութիւնը, իւր հիմնական օրէնքները՝ ասոնք բոլորն ալ նոյն իսկ Աստուծոյ մատամբ զրուած են, և այնպէս Եկեղեցւոյ աւանդուած են որպէս զի այս Աստուածային օրինաց համեմատ հոգւոց փրկութիւնն հոգայ և յաւիտենական երանութեան ուղղէ իր պաշտօնէից ձեռօքը. որոնց միայն խոստացեր է այս վախճանիս համար կարևոր եղած իւր

(1) Յոզ. Ե. 10:

մանաւոր ստորութիւնը : « ահաւասիկ ես ընդ ձեզ եմ մինչև 'ի կտօտարած աշխարհի » : Ասոր համար է՝ որ թող չի տրուիր աշխարհայնոց՝ Եկեղեցւոյ գործքին միջամուխ ըլլալ՝ անոր տեսչութեան մէջ խառնուել, և Աստուածադիր կարգաւորութիւնը խռովել : Երկնից բանալիքները յանձն Առաքելապետին՝ Եկեղեցւոյ՝ և մի միայն Եկեղեցւոյ յանձնուած ըլլալուն համար, հարկաւորապէս կը հետևի որ՝ անոր կապածը բնաւ ուրիշ մը չի կրնար արձակել, և անոր արձակածը ուրիշ մը չի կրնար կապել. և Յովհաննէս Աւետարանչին խօսքերով զուրցելու համար՝ անոր գոցածը ուրիշ մը չի կրնար բանալ՝ և անոր բացածը ուրիշ մը չի կրնար գոցել. « բանայ և ոչ ոք է որ փակէ, և փակէ՝ և ոչ ոք է որ բանայ » (1) :

Բայց Քրիստոսի Եկեղեցին որչափ նախանձախնդիր է իր Աստուածային իրաւանցը, այնչափ ալ հաւատարիմ է՝ եւ իր իշխանութեան սահմանէն դուրս չելլեր. իր սահմանը եւ պարտաւորութիւնը լաւ կը ճանաչէ, ըստ Աստուածային հրամանին կայսեր կուտայ որ ինչ կայսեր պատշաճ է, եւ Աստուծոյ որ ինչ Աստուծոյ է : « Տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ » (2) : Արով երբէք մէկու մը առիթ չի տար իր իշխանութեան գործադրութեանը վրայ դանդատելու, իբր թէ իւր սահմանը անցած եւ ուրիշին արօրին ձեռք զարկած ըլլայ : Կարելի է որ այսպիսի անկարգութիւն մը պատահի մասնաւոր Եկեղեցւոյ մը կողմանէ, բայց քանի որ այսպիսի անպատեհութիւն մը հանդիպի՝ դիւրին է այն բարձրագոյն իշխանութեան գիմել՝ որն որ Քրիստոս Տէրն մեր իւր Եկեղեցւոյ կեդրոն հաստատեց. որպէս զի անկարգութիւնները զպէս, եւ ամենայն ինչ իրենց իրաւանց, արգարութեան, եւ ճշմարտութեան սահմանին մէջ պահէ :

Ապաքէն ընկերական կամ աշխարհային կառավարութիւնն ալ իր սահմանին մէջ վերնագոյն իրաւունքն ունի՝ իր իշխանութեան կարգադրութիւններն ու հրամանները յարգել տալու, որն որ աշխարհչիւս վրայ մարդուս բարեկենդանութեան ընկերական կեանքին խաղաղութեան և երկնաւոր երջանկութեանը համար սահմանուած է, և ամէնքն ալ պարտաւորութիւն ունին զանիկայ յարգելու և հնազանդելու իր սահմանին մէջ : Ինչպէս հոգևոր իշխանութիւնը աշխարհային իշխանութեանէ չի ծագիր, նոյնպէս աշխարհային իշխանութիւնն ալ հոգևոր իշխանութեանէ չի պատճառիր : Աս երկու իշխանութիւնները մի և նոյն աղբիւրէ՝ Աստուծոյ յառաջ կուգան. մէկը՝ արարչութեան ժամանակ Աս-

(1) Յայտ. Յովհ. Կ. 7 :
 (2) . Մատթ . իր . 21 :

տուծոյ բնական օրինաց շնորհած զօրութեամբը . միւսը՝ ուղղակի և անմէջապէս Մարմնացեալ Արդւոյն Աստուծոյ հաստատած Եկեղեցւոյն սահմանադրութեան զօրութեամբը : Ասոր համար Առաքելալը կը հրամայէ որ թաղաւորաց և իշխանաւորաց համար աղօթենք . « նախ քան զամենայն առնել աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս՝ գոհութիւնս . . . մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն Աստուած » պաշտութեամբ և սրբութեամբ » (1) : Եւ Եկեղեցին այնչափ աւելի ևս սիրով կ'աղօթէ և երախտապարտ կը ճանաչէ զինքը՝ և շնորհակալ կ'ըլլայ աշխարհային իշխանութեանց՝ որչափ որ աշխարհային իշխանութիւնները Եկեղեցւոյ կրօնական հանգամանացը կարեւոր ազատութիւնը թոյլ կուտան և դիւրութիւն կը շնորհեն :

Ապաքէն 'ի պարծանս մեր վեհափառ ինքնակալին՝ յօժար մտօք խոստովանինք՝ որ իւր շարեխնամ մարդասիրութեամբը բարեհաճեցաւ շնորհել իր հպատակներուն որ ամենքն ալ կարենան ազատութեամբ՝ կրօնից պարտաւորութիւնները կատարել. ինչպէս իրօք մենք ալ այնչափ ժամանակ վայելեցինք անոր շնորհմունքները, որուն համար մեր երախտագիտութիւնն ալ բնաւ զանց ընելու չենք : Եւ եթէ ժամանակէ մը ի վեր՝ կարող չենք առաջուան պէս մեր կրօնական սուրբ պաշտամունքներնուս գործադրութեան ազատութիւնը վայելելու, և հոգևոր պարտաւորութիւննիս ըստ կարգի կատարելու, այս դժբախտութեան պատճառը՝ հաստրակութեանս մէջ ծագած՝ ամենուր ծանօթ՝ թշուառ հերձուածն է : Սակայն վստահ ենք որ մեր վեհափառ ինքնակալը՝ իւր իրաւասէր արդարութեամբը կը բարեհաճի վերջապէս անկարգութիւնները զօպելու, և իւր վեհագոյն հրամանաւոր անօրինելու որ իւրաքանչիւր ոք յարգէ և հնազանդի՝ իւր ինքնակալութեան իշխանութեամբը բոլոր հպատակներուն կրօնքի ազատութեանը համար շնորհած բարձր հրամաններուն. որով և մենք ամենքնիս ալ կարող կ'ըլլանք առաջուան պէս երախտագէտ հոգևով վայելելու նոյն շնորհները : Ուստի շարունակենք անդադար աղօթելու առ Բարձրեալն Ամենաազնիւն Աստուած՝ որ շնորհէ մեր բարեխնամ ինքնակալին կենացը երկար բարեյաջող օրեր . շարունակենք ևս մեր հպատակութեան և հաւատարմութեան պարտաւորութիւնները անխափան կատարելու ըստ Աստուածային հրամանին « տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ » :

Այսպէս էր միշտ Պատուական Եղբարք, Յարգոյապատիւ Գործակիցք, եւ Սիրելի Արդեակք, այսպէս էր միշտ ձեր ընթացքը, ձեր հպատակութիւնը և ձեր Աստուածային պաշտամանց գործադրութեա-

(1) Ա. Յիւ. Բ. 1 . 2 :

նը մէջ հրապարակաւ բովանդակ աշխարհքիս առջեւ ամենուն տուած՝ ամեն գովեստից արժանի ձեր բարի օրինակները ուրիշ կերպարանք երբէք չունէին : Արդ կը փութանք մեր երախտագէտ շնորհակալութիւնը ձեզի յայտնելու եւ մեր խորին մխիթարութիւնը ձեզի պարզելու : Ամէն գովութեան արժանի է նաև ձեր ամենուր այսչափ հաստատուն եւ համախորհուրդ միաբանութիւնը, որով ձեր աներկիւղ քաջութիւնը կրցաք չափաւորել Քրիստոնէավայել խաղաղ հանդարտութեան հետ, եւ այսպէս կարող եղաք ամենայն խոհեմութեամբ կատարել ձեր ծանր եւ փափուկ պարտաւորութիւնները ժամանակիս այսչափ դժուար պարագայից մէջ : Ընդհանուր Եկեղեցին ազգք եւ ազինք գոհ աչօք տեսան եւ մեծարեցին ձեր հաւատարիմ եւ նախանձախնդիր տքնութիւնը այնչափ տառապանաց մէջ որ կրեցիք : Նոյն իսկ աշխարհային իշխանաւորք եւ պաշտօնատարք ձեր այսպիսի քաջասիրտ եւ չափաւորեալ վարմունքներնուդ նկատմամբ՝ գովեցին ձեր մեծարանքը եւ հպատակութիւնը որ միշտ ցըցուցիք եւ հրապարակաւ յայտնեցիք Եկեղեցական եւ միանգամայն աշխարհային իշխանութեանց : Հակառակասէր եւ նախապաշարեալ անձինք որչափ կ'ուզեն թող չարախօսեն, բայց վերջապէս չեն կրնար չի համոզուիլ թէ մեր բաղձանքն ու ջանքը այս աշխարհքիս անցողական գործքերուն չեն նայիր : Մեր փոյթն ու դիտումը մի միայն Եկեղեցւոյ խաղաղութիւնն է, մի միայն հասարակութեան բարիքն ու փրկութիւնն է, եւ տէրութեան բարեյաջողութիւնը, որով մեր հոգեւոր պարտաւորութեանց ազատ կատարումը, մեր Եկեղեցական պաշտամունքներնուս համարձակ գործադրութիւնը կը լրանայ, դուք ալ մխիթարուիք հաւատացելոց օգտին եւ հաստատութեան համար ձեր կրած տառապանաց եւ աշխատութեանց մէջ՝ հաւատարմութեամբ եւ քաջութեամբ պաշտօննիդ կատարելուդ վրայ : Երանի՜ անոնց ալ որ ձեր այսպիսի նախանձայոյզ հոգատարութենէ օգուտ քաղեցին :

Այս է, Սիրելիք, մեր վստահութիւնն ու քաջալերութիւնը որ ունինք ՚ի Քրիստոս Յիսուսի Տէր մեր, երբոր իր շաւղաց վրայ ընթանալով իւր Աստուածային պատուիրանները կը պահենք, եւ կը հետեւինք Երանելի Առաքելոց եւ Սրբոց Հարց օրինակներուն, որոնք սուրբ ուղղափառ Եկեղեցւոյ կեդրոնին հաստատագէտ յարելով՝ իրենց հաւատարմութեանը յանձնուած հոգւոց փրկութեան համար կեանքերնին սպառնցին Առաքելական արութեամբ, մանաւանդ ան գաւառներու եւ քաղաքներու մէջ ուր դուք ալ կը գտնուիք : Յիշեցէք Սուրբ Գրիգորները, Բարսեղները, Աթանասները, Ոսկեբերանները, Իգնատիոսները, եւ այլ անթիւ Եպիսկոպոսները եւ Առաքելական գործակիցները, որոնք

այսպէս ընթանալով յաւիտենական փառաց արժանի եղան : Յիշեցէք նոյն իսկ կենդանի օրինակը մեր քաջասիրտ եւ խնամակալ Հօրը որ յԱթոռն Պետրոսի կը նստի, եւ բանիւ եւ օրինակաւ իր Հայրական գութը ամենուս վրայ կը տարածէ, զմեզ կը լուսաւորէ եւ կը յանձանձէ : Երբէք պիտոր չի մոռնանք վերջի ատեններս ալ նորէն մեզի՝ մանաւանդ ձեզի նկատմամբ ուղղած մխիթարական եւ քաջալերական խօսքերը, որ մեր սրտերը կը բորբոքեն յեռանդն աստուածապաշտութեան եւ ուղղափառ Աթոռիկէ հաւատոյ : « Զոր յայտ արարեր Մեզ, Պատուական « Եղբայր (կը գրէ մեզի Սրբազան Քահանայապետը), զանյողդողդ « հաստատութենէ Եպիսկոպոսաց, կղերց եւ հաւատացելոց քոյոյ Պատ « ըրարքութեանդ, և զդարձէ ՚ի ծոց Եկեղեցւոյ բազմաց ՚ի միամտաց « անկեղոց ՚ի մոլորութիւն, վասն այնորիկ իսկ զյուսոյ՝ զոր ունիս վասն « յաղթութեան ճշմարտութեանն առ քոյսդ, այդ ամենայն կարի իմն « մխիթարեցին զմեզ, և լցուցին իսկ զմեզ խնդութեամբ մեծաւ հա « ւաստիք հաւատարմութեան և շնորհաւորութիւնք, զորս ընծայեցեր « մեզ նաև յանուն Հայոց Աթոռիկեայց՝ որ ընդ հոգևորական իշխա « նութեամբդ գտանին : Սրդարև ամենայն ոք որ խորհիցի եթէ որպի « սի . . . հալածանօք հարստահարեցան նոքա . . . չմարթի չտեսանել ե « թէ տեսիլ եղեն հրեշտակաց և մարդկան, և ոչ սքանչանալ ընդ այդ « պիսի առաքինութիւն, որում հաղիւ թէ բաւական երևի մարդկեղէն « զօրութիւն յայսպիսի դառն և երկայնաձիգ փորձութեան, նա մանա « ւանդ ոչ ոք ՚ի նոցանէ յերեսաց այնքան աղետից անկեալ վհատեցաւ « և զբազումս ՚ի հերձելոց յինքեանս ձգեցին : Սրդ բոլորով սրտիւ « խնդակից լինիմք ընդ քեզ և ընդ նոսա, և որչափ պայծառագոյնս « զերկնաւոր զօրութիւնն հեղեալ ՚ի նոսա յայսպիսի դառն հանգամանս « իրաց տեսանեմք, այնչափ ևս առաւել վստահ եմք, եթէ զօրացեալ « և բորբոքեալ նովին օգնականութեամբ՝ ոչ միայն արիւթեամբ ընդ « դէմ գառնայցեն նոքա դաւաճանութեանց և ճգանց հերձելոցն, և « հաստատութեամբ կացցեն ՚ի հաւատս իւրեանց, և ՚ի կաթողիկէ մի « ութեան . այլ նաև սակաւ առ սակաւ յօժարեցուսցեն յուղիղ միտս « զորս միանգամայն պատրեցանն ՚ի չարահնար մարդկանէ . . . Սրդ՝ « զայդ (զպայծառ յաղթութիւն) մաղթեմք Եպիսկոպոսաց, կղերց, « և հաւատացելոց քոյոյ Պատրիարքութեանդ, զի յետ արկանելոյ ար « տասուօք զսերմանիս ձեր, դառնայցէք ուրախութեամբ բերելով զ « րայս ձեր առատացեալս » (1) :

Բայց Սրբազան Քահանայապետին այսպիսի զօրացուցիչ բարեմաղթու « թիւնը աւելի պտղաբեր ընելու համար՝ ունինք յերկինս առանձին բարեխօս

(1) Թղթ . Սրբազան Քահանայապետին ՚ի Յ Յունուարի 1874 :

Հայաստանեայց առաքեալ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, որ զմեզ ազդովին Քրիստոսի Յիսուսի ժառանգ և ժառանգակից ըրաւ՝ այնչափ չարչարանաց համբերութեամբ, ողջամիտ վարդապետութեան քարոզութեամբ և կաթողիկէ միութեան եռանդեամբ. զոր արդեամբ և դործով ցուցուց իր նորադարձ հօտը Քրիստոսի Յիսուսի յերկրի փոխանորդին՝ Հըռոմայ Քահանայապետին՝ խնամոցը անձամբ յանձնելով, Գիմենք ուրեմն աս մեր Սուրբ Նախահօր բարեխօսութեան՝ որ դժութեամբ հայի իր կաթողիկէ Հռոմէական հաւատոյ հաւատարիմ և եռանդուն որդեկաց, և մեր վրայ առանձինն, որ անարժանութեամբ ձեր հաւատացելոցդ հոգւոց փրկութեան հոգը յանձն առած ենք:

Ահաւասիկ՝ ձեր Աստուածապաշտութեան և եռանդեան նոր սնունդ մը տալու մտքով, ՚ի յիշատակ անսպառ մարդասիրութեան Փրկչին մերոյ՝ աս մօտերս մեր Պատրիարքական Եկեղեցւոյն մէջ ՅԻՍՈՒՍԻ ՍՐՏԻՆ շերմեռանդութիւնը հանդիսապէս հաստատեցինք, և ձեր այնչափ սիրով և գոհութեամբ նոյն բարեպաշտութիւնը կատարելը՝ մեր ցաւակցեալ սիրտը անսպասմելի ուրախութեամբ մխիթարեց: Գիտէք արդէն որ այս բարեպաշտական կրթութիւնը՝ մանաւանդ վերջի ժամանակներս շատ գաւառներու և վիճակներու մէջ հաստատուած է, և հաւատացեալք ոչ միայն շերմաշերմ աղօթքներով Քրիստոսի Յիսուսի դժած և ողորմած սրտին և մարդասիրութեան կը դիմեն, այլ նաև իւր Աստուածային սիրոյն մեծամեծ յիշատակներ՝ Եկեղեցիներ կ'ուխտեն և կը կանգնեն՝ Սուրբ Ռեղափառ Եկեղեցւոյ և բովանդակ աշխարհիս համար խաղաղութիւն և հանդարտութիւն խնդրելով: Ապաքէն այն ամենագութ Աստուածային Սիրտը որ ամենուս փրկութեան համար սիրոյ հըրով վառուած՝ այնչափ չարչարանօք փրկական խաչին վրայ իւր անդին արեանը մինչև ցվերջին կաթիլը Աստուածային կողէն թափեց. այն մարդասէր և բարերար Սիրտը մեզի բացուած է, մեր խոնարհ և շերմեռանդ պաղատանքներնուս չի կրնար դէմ կենալ, մեր խնդրուածները սիրով կ'ընդունի: Գիմենք ուրեմն առ նա խոնարհ սրտիւ և շերմեռանդ աղօթքներով, խնդրենք և պաղատինք մեր Սրբազան Հօր և Քահանայապետին երկայն կենաց մխիթարութեան և ազատութեան համար, աղաչենք որ ինքն Քրիստոս հաւատոյ աճումն և յաղթութիւն շնորհէ, բովանդակ Սուրբ Եկեղեցւոյ հալածանաց և տառապանաց օրերը կարճեցունէ, խաղաղութիւն պարգևէ ամենայն աշխարհիս: Աղաչենք նաև մասնաւորաբար մեր խոտորեալ եղբարց համար, որպէս զի խոնարհ հոգւով անկեղծ սրտիւ և ուղիղ հաւատով իրենք ալ աս Աստուածային գթութեան աղբիւրին դիմեն, և բնաւ երկբայութիւն չունինք որ Աստուծոյ ողորմութեանը արժանի ըլլալով կը հաշտուին Սուրբ

Եկեղեցւոյ հետ, կը գանան իրենց հոգւոց հանգարտութիւնը, և կ'ըլլան մեր անսպասմելի մխիթարութիւնը և սիրտիւմը, և անցեալ ժամանակներու պէս ամենքնիս ալ միաբան միախոհ ուրախութեամբ և գութութեամբ ամենապարզ և Աստուծոյ մարդասիրութիւնը օրհնելու՝ գութելու՝ և բարեբանելու արժանի կ'ըլլանք: Այս յուսով և այս խոնարհ և ջերմ պաղատանքով, Ամենասուրբ ԿՈՅՍ ՄՍՐԻԱՄ Աստուածածնոյ բարեխօսութեամբ՝ ամենքնուդ ալ սրտանց կը մաղթեմք Երկնային Պարգևատուէն ամէն բարիք, և իւր առատապարզ և Աստուածային Օրհնութիւնը:

Տո՛ւն է Հո՛ւլ, ոչո՛ւոյ տրո՛ւ Սրբո՛ւ Բռնիչո՛ւնի, Ի 15. Ժողովո՛ւն 1874. Յե՛րմբերո՛րդ ո՛ր Կո՛նդիկո՛սթի՛ն Մերոյ:

ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ.
Պ. Կ.

Յ. Բողո՛ւն Քոչո՛ղար



401 246

« Ազգային գրադարան



NL0108820

